209

1. Երբ որ սպառվես կյանքի վազքուղում,
Երբ որ սպառվես դեր խաղալու մեջ
Ու երբ հայտնվես կյանքի փակուղում,
Հիշիր՝ կյանքդ է խիստ վտանգի մեջ:
    Ես եկա, որ կյանք ունենաք և ավելի,
    Ես եկա, որ կյանք ունենաք:

2. Երբ որ սպառվեն հաճույքները քո,
Ու քեզ սպառես հաճույքների մեջ,
    Հիշի՛ր՝ այս կյանքը դժոխք է տանում,
    Ինչո՞ւ այրվես կրակների մեջ:

3. Հիմա է քեզ պետք արթնանալ քնից,
Քանի դեռ սիրո ժամանակներ են,
Հիմա ազատվի՛ր մահվան սև բեռից,
Քանի դեռ ներման ժամանակներ են:

    Օրհնյալ լինի անունը Հիսուսի, ամեն,
    Օրհնյալ լինի անունն իմ Փրկչի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025